ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

22.09.2023

No 01/01-1120

ԱՁ Աննա Կարապետյանին
ք. Երևան, Սասնա Ծռեր 12/4
ՀՎՀՀ 20129273

Ծանուցում
(Պայմանագիրը միակողմանի լուծարելու մասին)

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ «Գնորդ») և Աննա Կարապետյան ԱՁ-ի (այսուհետ «Վաճառող») միջև 2023թվականի փետրվարի 6-ին մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում կնքվել է N ՀՊՏՀ-ՄԱ-ԱՊՁԲ-23/ԾԿ-1 պայմանագիր, ըստ որի «Վաճառողը» պարտավորվում է մինչև 2023թվականի դեկտեմբերի 25-ը «Գնորդին» մատակարարել ծաղիկներ և ծաղկեպսակներ (ըստ անհրաժեշտության) մինչև 905000 ՀՀ դրամի: Սակայն 2023թվականի սեպտեմբերի 4-ին «Վաճառողը» Պայմանագրի 2.4.11 կետի համաձայն «Գնորդին» նախապես գրավոր տեղեկացրել է Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում ԱՁ-ի լուծարման գործընթաց սկսելու մասին, որի պատճառով այլևս չի կարող մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքների մնացած մասը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վաճառողը» խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և «Գնորդ» միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված ընդհանուր՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:

Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտոր՝ **Դ. Գալոյան**